Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2022 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՍՔՈԼԱԵ ՄՈՒՆԴԻ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.872300
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-09-18
1.5 ՀՎՀՀ-ն		02642122
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)094445465
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://scholae-mundi.org/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@scholae-mundi.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Տիգրան Բաբայան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	"MADE", "DILIJAN COMMUNITY CENTER", "SCHOLARSHIP AND PARTNERSHIP"	22,946,115
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
"Dilijan Community Center" project	7,438,559	
"Scholarships and partnerships" project	17,822,427	
"Arts and Crafts" project	59,711	
"Just Dilijan It " project	151,961	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	39,236,028	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	25,472,658	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 9 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համադրելի ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն իր 2021թ. հունիսի 7-ին թվագրված աուդիտորական հաշվետվությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք՝ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

16 մայիսի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	15,300	20,753
Ոչ նյութական ակտիվներ	5	2,369	2,813
		17,669	23,566
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		740	740
Դեբիտորական պարտքեր	6	3,477	3,509
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	1,414	17,828
		5,631	22,077
Ընդամենը ակտիվներ		23,300	45,643
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Սեփական օգտագործման ֆոնդեր	8	13,270	16,343
		13,270	16,343
Ընթացիկ պարտավորություններ			
Սահմանափակ օգտագործման ֆոնդեր	9	3,148	20,443
Սեփական օգտագործման ֆոնդեր	8	4,755	7,505
Կրեդիտորական պարտքեր և պահուստներ	10	2,447	1,615
		10,350	29,563
Սեփական կապիտալ			
Կուտակված վնաս		(320)	(263)
		(320)	(263)
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		23,300	45,643

Ֆինանսական հաշվետվությունները հավանության են արժանացել տպագրության Հոգաբարձուների խորհրդի կողմից և ստորագրվել են 2022թ. մայիսի 16-ին:

Վասիլի Բարդաղիմով

Տնօրեն

Մարիյա Ամիրյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը հանդիսացող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ		-	148
Վաճառքի ինքնարժեք		-	(219)
Համախառն վնաս		-	(71)
Եկամուտ անսահմանափակ օգտագործման ֆոնդերից		-	617
Եկամուտ սահմանափակ օգտագործման ֆոնդերից	9	40,141	122,215
Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից	8	5,823	11,484
Այլ գործառնական եկամուտ		224	56
Ծրագրերին վերաբերող ծախսեր	11	(31,537)	(89,022)
Իրացման և շուկայավարման ծախսեր	12	(94)	(10,537)
Վարչական և այլ ծախսեր	13	(14,535)	(31,522)
Գործառնական շահույթ		22	3,220
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(57)	(263)
Պարտքային կորուստների զծով ծախս		-	(3,220)
Վնաս մինչև հարկումը		(35)	(263)
Շահութահարկի զծով ծախս		(22)	-
Տարվա վնաս		(57)	(263)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական վնաս		(57)	(263)

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված վնաս	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական վնաս	(263)	(263)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(263)	(263)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական վնաս	(57)	(57)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(320)	(320)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(57)	(263)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	5,897	10,338
Հիմնական միջոցների օտարումից վնաս և դուրսգրում	-	8,600
Նվիրատվություններից եկամուտ՝ սեփական օգտագործման ֆոնդերից	(5,823)	(11,485)
Պարտքային կորուստների գծով ծախս	-	3,220
Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով ծախս	2,246	6,222
Շահութահարկի գծով ծախս	22	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս	57	263
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	2,342	16,895
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	7	8,580
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(17,295)	(38,204)
Սահմանափակ օգտագործման ֆոնդերի փոփոխություն	(1,436)	16,363
Սեփական օգտագործման ֆոնդերի փոփոխություն	-	513
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(16,382)	4,147
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-	(512)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	-	(512)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(16,382)	3,635
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(32)	(1,271)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	17,828	15,464
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	1,414	17,828

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2022 10:44